Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի <<Անի կայարանի միջնակարգ դպրոց >>ՊՈԱԿ-ի՝ ինֆորմատիկա (2 դասաժամ), մաթեմատիկա (23 դասաժամ), ֆիզիկա (9 դասաժամ), քիմիա (7 դասաժամ), կենսաբանություն (5 դասաժամ), մայրենի-դասվար (21 դասաժամ), մաթեմատիկա-դասվար (15 դասաժամ), երաժշտություն (7 դասաժամ), կերպարվեստ (6 դասաժամ), եսևշրջակաաշխարհը (3 դասաժամ), ֆիզկուլտուրա (18,5 դասաժամ), տեխնոլոգիա (6 դասաժամ), բնություն (3 դասաժամ) թափուր տեղերի համար:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
-դիմում (ձև 1), մեկ լուսանկար 3x4չ ափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
-անձը հաստատող փաստաթուղթ,
-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
-ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **սեպտեմբերի 4-ից մինչև սեպտեմբերի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և չաշխատանքային այլ օրերից:**

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբեր**ի 24-ին՝ ժամը 14:00-ին**, Անի կայարանի միջնակարգ դպրոցում, հասցե՝ ՀՀ Շիրակի

մարզ, Անի համայնք, գյուղ Անիավան, փ 1, 2. 5/1: Տեղեկություններին համար զանգահարել (093 23 95 11) հեռախոսահամարով: